Թագ ականակուռ գլուխ իմ,
զիա՞րդ վերացար.
10 Ժրաջան մեղու եւ գործ քաղցրահամ,
զիա՞րդ դադարեցար.
Ի յայգոյն Յիսուսի դու ծառ պտղալի,
զիա՞րդ գօսացար.
Լեզու քաղցրախօս, ահարկու դիմօք,
զիա՞րդ լռեցար.
Խորհուրդ բարի, կոյս մաքուր,
զիա՞րդ վերացար.
Ծով ծիրանի, խաղաղ, անքոյթ,
զիա՞րդ վրդովեցար.
15 Կանգնող գլորելոց,
զիա՞րդ վերջացար.
Հոգւով լցեալ տուն եւ տաճար,
զիա՞րդ քակտեցար.
Ձեռնաւարկու զեկդ ճարտար,
զիա՞րդ դու անկար.
Ղամբար լուսափայլ, ջահ անշիջելի,
զիա՞րդ դու շիջար.
Ճշմարիտ ոդկոյզ սիրով քո արբեալ,
զիա՞րդ ճմլեցար.
20 Մարգարիտ պայծառ, ատամունք չարեալ,
զիա՞րդ նստեցար.
Յայտդ քո լուսով, ունքդ քո կամար,
զիա՞րդ անտեսացար:
Նռենի ծաղիկ, փրթթեալ վարդենի,
զհա՞րդ տգեղացար.

11 գաւսեցար B: — 13 կուս AB: — 14 խաղ անքոյդ B: — 17 ձեռնաւառկու B: — 18 անշիջանելի B: